Արձանագրություն N 2-3

**ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-25/27 ծածկագրով ՀՀ Արմավիրի մարզի «Արմավիրի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայության ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք.Երևան 05.09.2025թ.

ժամը 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Մ. Աղայանց

Հանձնաժողովի անդամներ՝

Հ. Գինովյան

Տ. Կոմիտասյան

Ա. Քոչարյան

Ա. Հյուսիսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Հակոբյան

Բացակայում էր հանձնաժողովի անդամ՝ Է. Առուստամյանը

## 1. Մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունները չշտկելու մասին

---

(Մ. Աղայանց)

1.1 Ընդունել ի գիտություն, որ ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-25/27 ծածկագրով մրցույթի հրավերով ներկայացված տեխնիկական բնութագրով հստակ սահմանված են օբյեկտի նշանակությունը և անհրաժեշտ չափանիշները, ինչպես նաև անհրաժեշտ գործունեության տեսակները և ենթատեսակները: ՀՀ Արմավիրի մարզի «Արմավիրի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի շենքը ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման դրույթների համաձայն դասվում է **բարձր ռիսկայնության աստիճանի (IV կատեգորիայի) դասակարգում ունեցող հատուկ և կարևորագույն նշանակության (այդ թվում՝ սեյսմիկ պաշտպանության բնագավառի հատուկ և կարևոր նշանակության) օբյեկտների** շարքին և տվյալ ռիսկայնության օբյեկտների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման համար **անհրաժեշտ** լիցենզիայի և լիցենզիայի ներդիրների դասերը սահմանվում են Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվ իրավական ակտերով, մասնավորապես՝ Քաղաքաշինության մասին ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 5-րդ կետով, ուստի գնահատող հանձնաժողովը առաջնորդվում է միայն տվյալ հարցը կարգավորող իրավական ակտերի դրույթներով:

Գնման ընթացակարգի մասնակցի՝ «Ակադեմիկոս Ի.Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՍՊԸ և «Պլտոմեյկեր» ՍՊԸ կոնսորցիումի կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրված

անհամապատասխանությունների մասին 03.09.2025թ. ծանուցվել է վերջինիս՝ առաջարկելով ՀՀ կառավարության 04.05.2017թ N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի պահանջների համաձայն՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 04.09.2025թ. ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

1.2 Մասնակցի կողմից սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները չեն շտկվել:

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0:*

## 2 Գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին

---------------------------------------------------------------------------------

(Մ. Աղայանց)

2.1 Հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետի և ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-25/27 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.10-րդ կետի պահանջները, գնահատող հանձնաժողովը որոշեց «Ակադեմիկոս Ի.Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՍՊԸ և «Պլոտմեյկեր» ՍՊԸ կոնսորցիումի հայտը գնահատել անբավարար և մերժել:

2.2 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-25/27 ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարվել է չկայացած:

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0*

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------------------------------------- Մ. Աղայանց

Անդամ՝ ---------------------------------------- Հ. Գինովյան

---------------------------------------- Տ. Կոմիտասյան

---------------------------------------- Ա. Քոչարյան

---------------------------------------- Ա. Հյուսիսյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------------------------------------- Գ. Հակոբյան